ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Սեպտեմբերի 1-ին, կիրակի.- Տօն Գիւտի Գօտւոյ Սրբուհւոյ Աստուածածնի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

***

Սեպտեմբերի 15-ին, կիրակի.- Խաչվերաց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ավստրալիայի հայոց առաջնորդ Տ. Աղան արքեպս. Պալիոզյանը և «Հայր մեր»-ից առաջ հանգամանալից քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***

Սեպտեմբերի 16-ին, երկուշաբթի.- Ցիշատակ մեռելոց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Աշոտ արդ. Մնացականյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն վասն համորեն ննջեցելոց:

***

Սեպտեմբերի 22-ին, կիրակի.- Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս պատարագ մատուցեց Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը: «Հայր մեր»-ից առաջ Միքայել ծ. վրդ. Աջապահյանը ընթերցեց Վեհափառ Հայրապետի կոնդակը՝ նվիրված Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի քահանայագործության երեսունհինգամյակին:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***

Սեպտեմբերի 29-ին, կիրակի.- Տօն է Վարագայ Սրբոյ Խաչի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս պատարագ մատուցեց Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը և «Հայր մեր»-ից առաջ հանգամանալից քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն: